ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑ

ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՑՎԵՑ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Սեպտեմբերի 7-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բացվեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի կացարանային նոր մասնաշենքը: Բացման արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, ազգային բարերարներ տեր և տիկին Գառնիկ և Անահիտ Ցակուբյանները, տիկին Լուիզ Սիմոն-Մանուկյանը, տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյանները, Գեղարքունիքի մարզպետ Վահագն Հակոբյանը, Սևանի քաղաքապետ Աշոտ Ալեքսանյանը և բազմաթիվ հյուրեր:

Համալիրի շինարարությունն սկսվել էր դեռևս 1996 թ.: Ս. Հակոբ մատուռի նախագծի հեղինակը Բաղդասար Արզումանյանն է, իսկ չորս հարկանի ննջարանային մասնաշենքի նախագծողը՝ Օլեգ Շոկրիևը: Համալիրի ներքին հարդարումը կավարտվի 2003 թ.:

Նորակառույց շենքի ժապավենը կտրելուց հետո, կատարվեց Տնօրինեքի արարողություն՝ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի: Այնուհետև Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը հանգամանալից ներկայացրեց շենքի կառուցման պատմությունը՝ հույս հայտնելով, որ ճեմարանականների կենցաղի պայմանների բարելավումն առավել ևս պիտի խթանի ուսանողների հոգևոր և մտավոր գիտելիքների ամբարմանը:

Այնուհետև գեղարվեստական հայտագրով հանդես եկան Վազգենյան Հոգևոր Դրպրանոցի սաները: Շենքի կառուցման բարերար Գառնիկ Ցակուբյանն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ նշելով, որ ամեն ինչ պիտի անի հայրենիքի զորացման և Հայաստանյայց Եկեղեցու շենացման համար:

Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց ներկաներին՝ անդրադարձ կատարելով Դպրանոցի ստեղծման պատմությանը՝ երախտագիտությամբ հիշելով նախորդ երկու Հայրապետներին, ինչպես նաև ՀԲԸՄ-ին, որ սիրով ստանձնեցին Դպրանոցի հոգածությունը՝ որպես արդյունք նշելով, որ Դպրանոցն ավարտած 50 հոգևորականներ իրենց հովվական ծառայությունն են մատուցում Հայ Եկեղեցու անդաստանում:

Ի գնահատություն տեր և տիկին Ցակուբյանների՝ Հայ Եկեղեցուն մատուցած ծառայությունների, Վեհափառ Հայրապետը նրանց պարգևատրեց 1700-ամյակի շքանշանով:

Վերջում Ս. Հակոբ մատուռում կատարվեց հոգեհանգիստ՝ Ցակուբյանների գերդաստանի և համայն հայոց ննջեցյալների համար: